ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 նոյեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

159
(2825)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի ԳՈՐԾԵՐԸ ԿԱՐՃՎԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Ազգային անվտանգության ծառայությունը կարճել է 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարից հետո՝ գիշերը, Երեւանում զանգվածային անկարգությունների քրեական գործով անցնող 10-ից ավելի անձանց նկատմամբ հարուցված քրեական գործերը: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր. «2020 թվականի պատերազմի ավարտից հետո մի խումբ քաղաքացիներ, վրդովված ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ նոյեմբերի 9-ի հրադադարի մասին հայտարարությունից, գիշերը Երեւանում զանգվածային անկարգություններ կատարեցին: ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում այս դեպքերի մասով բազմաթիվ քրեական վարույթներ կային, որոնք մինչ օրս շարունակվում են: Եվ, ահա, այս դեպքերից 3 տարի անց միայն նախաքննական մարմինը դադարեցրեց տարբեր քաղաքացիների նկատմամբ քրեական հետապնդումները, քանի որ 3 տարի անց նախաքննական մարմինը հիմնավոր ապացույցներ չգտավ մեղադրյալների մասով, որ գործը ուղարկի դատարան: Հիշեցնենք, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ի գիշերը, երբ հայտնի դարձավ ղարաբաղյան պատերազմում հայկական կողմի պարտության եւ հրադադարի եռակողմ հայտարարության ստորագրման մասին, Երեւանում անկարգություններ սկսվեցին, հարձակման ենթարկվեցին Ազգային ժողովի, կառավարության շենքերը: Այս գործով որոշ քաղաքացիներ ազատազրկման դատապարտվեցին, իսկ շատերի մասով ԱԱԾ-ում քննությունը շարունակվում է, եւ նախաքննական մարմինը նրանց մեծ մասի վերաբերյալ գործը կկարճի, քանի որ ապացույցները բավականին թույլ են. խմբով ծեծել են, բայց կոնկրետ ով՝ պարզել չի հաջողվում»:

Եզրափակելով Չիչոյանների ընտանիքի մասին պատմող շարքը՝ այս անգամ հերթը Սերգեյ Չիչոյանինն է: Սերգեյ Չիչոյանը Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավոր է, նաեւ Բարձրագույն դատական խորհրդի անդամ է: Ինչպես Չիչոյանի եղբայրը՝ Արմեն Չիչոյանը, ինքն էլ պակաս համբավ եւ կարիերա չունի: Չիչոյանը հայտարարագրել է 4 անշարժ գույք՝ 3 հողամաս եւ 1 անհատական բնակելի տուն: Հողամասերից մեկը եւ անհատական բնակելի տունը ձեռք է բերել 2015 թվականին. դրանք գտնվում են Երեւանի Դավիթաշեն վարչական շրջանում: Այդ ժամանակ Չիչոյանը եղել է ՀՀ արդարադատության խորհրդի անդամ: Մյուս 2 հողամասերը գտնվում են Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքում, որոնք ձեռք են բերվել 2007 թվականին, երբ եղել է Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահը: Չիչոյանը 5 անշարժ գույք է հայտարարագրել՝ 1 հողամաս, 1 ավտոտնակ, 1 անհատական բնակելի տուն, 2 հողին ամրակցված անշարժ գույք, որոնք գտնվում են Գավառ համայնքում. դրանք 90 օրից ավելի փաստացի տիրապետում է Չիչոյանը, սակայն սեփականության իրավունքով գույքերը նրան չեն պատկանում: Ուսումնասիրելուց հասկանում ենք, որ այս գույքը 2022 թվականին Չիչոյանի մայրը՝ Օֆիկ Չիչոյանը, նվիրատվություն է արել Սերգեյ Չիչոյանի որդուն՝ Գոռ Չիչոյանին: Չիչոյանը սեփական մեքենա չունի, սակայն շահագործում է 2011 թվականի արտադրության, Toyota մակնիշի մեքենա:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ արդեն տեւական ժամանակ է՝ Նիկոլ Փաշինյանը տեղափոխվել է նախագահական նստավայր եւ զբաղեցրել նախագահի աշխատասենյակը, քանի որ կառավարության շենքում հերթական վերանորոգումն է իրականացվում: Հիշեցնենք, որ վերանորոգումը սկսվել է դեռեւս մայիս ամսից: «Ժողովուրդ» օրաթերթին կառավարությունից հայտնել էին, որ սեպտեմբերի 5-ին վերանորոգման աշխատանքները ավարտին հասցված կլինեն: Սեպտեմբերից արդեն մեկ ամսից ավել ժամանակ է անցել, բայց Նիկոլ Փաշինյանը դեռ հարմար տեղավորված է նախագահականում ու, կարծես, միտք էլ չունի իր աշխատավայր վերադառնալ, քանի որ նախագահականում ավելի պաշտպանված ու ապահով է իրեն զգում: Պատճառն էլ այն է, որ թե՛ ընդդիմադիրները, թե՛ տեղահանված արցախցիները, թե՛ այս իշխանություններից դժգոհ քաղաքացիները, սովորաբար, իրենց ակցիան իրականացնում են կառավարության դիմաց ու խաթարում են նրա անդորը: «Ժողովուրդ» օրաթերթին կառավարությունից հայտնեցին, որ Փաշինյանն իր գործառույթները դեռ նախագահականից է իրացնում: Հետաքրքրվեցինք նաեւ՝ երբ է Նիկոլ Փաշինյանը պատրաստվում վերադառնալ իր հիմնական նստավայր, արդյոք վերանորոգումները դեռ չեն ավարտվել. «Դեռ նախագահականում է, բայց մոտ օրերս արդեն հիմնական կտեղափոխվի կառավարություն»-ասացին մեզ կառավարությունից: Տպավորություն է, որ Նիկոլ Փաշինյանն արդեն հարմարվել է Վահագն Խաչատուրյանի նստավայրում ու ձգձգում է իր տեղափոխումը, ինչը, բնականաբար, նախագահի սրտով չէ, քանի որ Փաշինյանի պատճառով ինքը «դրսում» է մնացել:

Երկու շաբաթ է անցել, սակայն ՀՀ բարձրագույն դատական խորհրդի գիտնական անդամի տեղը շարունակում է թափուր մնալ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ քաղաքական իշխանությունները եւ ԲԴԽ-ն չեն կարողանում գտնել գիտնական անդամի, որ նրան ներկայացնեն ԱԺ ու ընտրեն խորհրդի անդամ: Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 25-ին Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի եղբայրը՝ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի անդամ Դավիթ Խաչատուրյանը, ՀՀ ԱԺ-ի կողմից ընտրվեց Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, իսկ ԲԴԽ անդամ Նաիրա Հովսեփյանը՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր: Հիշեցնենք, որ Բարձրագույն դատական խորհուրդը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թափուր տեղի համար առաջադրել էր Կարեն Թումանյանի, Նաիրա Հովսեփյանի եւ Գուրգեն Մալխասյանի թեկնածությունները: Բարձրագույն դատական խորհուրդը քրեական պալատի դատավորի թափուր տեղի համար առաջադրել էր Դավիթ Խաչատուրյանի, Անահիտ Հակոբյանի եւ Մանվել Շահվերդյանի թեկնածությունները:

ԶՐՈՒՅՑ

«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ն ՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոկտեմբերի 10-ին Երեւանի քաղաքապետի թեկնածու Տիգրան Ավինյանը արտահերթ հրավիրված ավագանու նիստում ընտրվեց Երեւանի քաղաքապետ: Ընտրության արդյունքներով Տիգրան Ավինյանը ստացել է 32 կողմ, 5 դեմ ձայն:

Նշենք, որ նա միակ թեկնածուն էր, եւ, ըստ օրենքի, նրան ընտրվելու համար բավարար էր անգամ 27 ձայնը:

Քաղաքապետի ընտրության արդյունքների եւ ընդդիմության քայլերի մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանի հետ:

-Ձեր խմբակցությունը եւ ընդդիմադիր թեւից հանդես եկող «Ազգային առաջընթաց»-ը հայտարարել են, որ չեն մասնակցելու քաղաքապետի ընտրության օրակարգով ավագանու նիստերին: Չնայած սրան՝ իշխանությանը հաջողվեց մյուս ուժերին իր կողմը գրավել, նիստ արեցին, քաղաքապետ ընտրեցին: Ինչու՞ ձեր բոյկոտը արդյունք չտվեց, ի՞նչն էիք սխալ հաշվարկել:

-Իշխող ուժը, ունենալով բոլոր հնարավորություններն ու բոլոր լծակները վերարտադրվելու, Հայաստանի Հանրապետությունն ամբողջությամբ տանելու դեպի թրքահպատակացում, ինչպես որ մեր սուրբ Արցախը կարողացան հնարավորինս սեղմ ժամկետներում դարձնել ադրբեջանական տարածք, նույն քայլերն այսօր արվում է Հայաստանի Հանրապետությունում, եւ բացառություն չի կազմում Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը՝ Երեւանը: Մայրաքաղաքում Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավի ընթացքում «Մայր Հայաստան» դաշինքը բազմիցս խոսում էր, բարձրաձայնում էր, որ Արցախը չպետք է կորցնենք, քանի որ Արցախը մայր Հայաստանի դարպասն է ու հենասյունը, եւ Արցախը պետք է կարողանանք պաշտպանել՝ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում թույլ չտալով իշխող այս ուժի վերարտադրումը: Սակայն, ի պատիվ մեր հայրենակիցների՝ երեւանցիների, պետք է փաստենք, որ ընդհամենը 9%-ը քվեարկության օրը իրենց վստահության քվեն պարտադրված տվեց իշխող ուժին: Միգուցե նրանք վարչական աշխատողներ էին, որոնք պարտավոր էին այդ քայլին գնալու, բայց վստահ եմ, որ նրանց մեջ էլ կան այնպիսի հայեր, ովքեր գիտակցում են իրականությունը: Միգուցե շատերը ճիշտ ընտրություն են արել, բայց այդ ինը տոկոսը սրանց վստահության քվե տվեց, ինչը թույլ չէր տալիս իշխող ուժին ունենալ իշխանություն մայրաքաղաքում:

Այս պարագայում երեք ընդդիմադիր կոչվող ուժերը (ինչո՞ւ եմ ասում կոչվող. քանի որ մենք տեսանք, որ կար խմբակցություն, որն, ամեն դեպքում, իշխող ուժի օրակարգի մասնակիցը եւ նրանց վերարտադրման աջակիցը դարձավ), այդ թվում՝ մենք, հայտնեցինք մեր դիրքորոշումը՝ սեպտեմբերի 18-ին հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ հնչեցնելով բոլոր այն կետերն ու գծերը, որոնք վերաբերում են Երեւանի ավագանու ընտրություններին, կոնկրետ՝ քաղաքապետի ընտրությանը:

Զրույցն ամբողջությամբ՝ ArmLur.am կայքում

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՄԱՐՈՒԹՅԱՆԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Նախկին քաղաքապետ, դերասան Հայկ Մարությանն իր մոնո ներկայացումով նախ հայտ ներկայացրեց սեպտեմբերի 17-ին կայանալիք Երեւանի ավագանու ընտրություններին: Դերասան-քաղաքապետն իր սրտառուչ հայտարարություններով փորձեց երեւանցիների սիրտը շահել. «Ինձ պետք է, որ երկիրը ծաղկի, հասարակությունը դուրս գա ապատիայից: Եթե դա մենք չանենք, ապա անելու են մարդիկ, որոնք առաջնորդվում են միայն իրենց սեփական եւ խմբակային շահերով, ովքեր թքած ունեն մարդկանց վրա, եւ արդեն ոչ միայն փոխաբերական, այլեւ ուղիղ իմաստով: Հետեւաբար հայտարարում եմ՝ իմ թիմի հետ մասնակցելու եմ ավագանու առաջիկա ընտրություններին: Մեր թիմը չունի մեծ գումարներ, լրատվամիջոցներ, օլիգարխներ, մեր միակ հարստությունը դուք եք, երեւանցիներ: Միակ որոշողը դուք եք: Մենք միասին ամեն ինչ կարող ենք»,- հայտարարել էր Մարությանը:

Պասիվ քարոզարշավը, լրագրողների ու հանրության շփումներից խուսափելը թողեց իր հետեւանքները, եւ արդյունքը եղավ այն, որ Մարությանը հավաքեց մոտ 19 տոկոս ձայն:

Քաղաքական փորձ չունեցող Հայկ Մարությանը տապալեց նաեւ քաղաքական հետագա գործընթացները. երբ

թվում էր, թե ընդդիմադիր դաշտում նրա թեկնածության շուրջ կոնսոլիդացիա է ձեւավորվում, նա սկսեց նոր նախապայմաններ առաջ քաշել եւ ձախողեց այդ գործընթացը: Հիմա էլ Հայկ Մարությանը չի կողմնորոշվում. վերցրել է ավագանու անդամի մանդատը, բայց չի գալիս քաղաքապետարան ու չի մասնակցում ավագանու նիստերին, այսպես ասած, ընդհատակ է անցել:

Ստացվում է՝ նախկին քաղաքապետ Մարությանը միայն ականջահաճո հայտարարություններ է անում ու անհետանում, բայց իրական պայքարի ու հստակ քայլերի պատրաստ չէ:

ՔԱՎՈՐ–ՍԱՆԻԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դեպքերով «խառը» պարոն Բարխուդարյանը, որը բերման էր ենթարկվել իր թիմակիցների հետ գնումների գործընթացը չարաշահելու կասկածանքով, ավելի ուշ ստորագրությամբ բաց թողնվեց, դեռ մի բան էլ սկսեց ՔՊ-ականների քեֆ-ուրախություններին մասնակցել:

Այն, որ Բարխուդարյանը ՔՊ-ականների ոչ ծպտյալ հովանավորյալն է, դա մեկ կամ մի քանի հոգի չէ, որ հայտնում են, սակայն թե ինչ է կատարվում այս պատմության հետեւում, իրականում բավականին հարցականներով լի է:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ պարոն Բարխուդարյանը, փաստորեն, ոչ միայն Ավինյանի եւ Կատվալյանի ընկերն է, ոչ միայն Ռուբեն Ռուբինյանի հավատարիմն է, այլ, պարզվում է, քավոր-սանիկական հարաբերությունների մեջ են:

Ռուբեն Ռուբինյանը Արման Բարխուդարյանի երեխայի քավորն է, եւ, հավանաբար ու բնականաբար, ինչպես հայկական սովորություններն են ենթադրում, քանի քավորը կա, սանիկը ոչ մի «պրոբլեմ» չպետք է ունենա:

ՔՊ–Ն ԱՅՍՕՐ «ԵՌԱԲԼՈՒՐ» ՉԻ ԱՅՑԵԼԵԼՈՒ

Այսօր նոյեմբերի 9-ն է՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմի 3-րդ տարելիցը:

Այս օրը հայոց օրացույցում սեւով է նշված: Երեք տարի առաջ այս օրը ստորագրված Հայաստան-Ռուսաստան-Ադրբեջան եռակողմ համաձայնագրի արդյունքում Արցախի մեծ մասը մնաց թշնամուն, իսկ այսօր արդեն հայերի պատմական բնօրրան Արցախն ամբողջությամբ կորսված է ու հայաթափված:

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր»-ը, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, սովորաբար, նոյեմբերի 9-ին այցելում էր «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու մեր նահատակների հիշատակին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այսօր ՔՊ խմբակցությունը չի պատրաստվում գնալ «Եռաբլուր»:

Ինչպես մեզ փոխանցեցին՝ հնարավոր է՝ առանձին պատգամավորներ գնան, բայց խմբակցությունն այսօր այց չի նախատեսում «Եռաբլուր»:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը նոյեմբերի 8-ին ընդունել է ԱՄՆ Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Լուի Բոնոյին: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակը:

Կողմերն անդրադարձ են կատարել տարածաշրջանում տեւական խաղաղության եւ կայունության հաստատմանն ուղղված ջանքերին եւ Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կարգավորման գործընթացին: Վերոնշյալի շրջանակներում ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը ներկայացրել է հայկական կողմի դիրքորոշումները:

Զրուցակիցները նաեւ քննարկել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՓԱՇԻՆՅԱՆՆ ՈՒ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ

«ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մաթեւոս Ասատրյանի մահը ծանր հարված է մեզ համար: Մաթեւոսը մարդ է, ում վրա կարելի է հենվել՝ վստահ լինելով, որ դժվար պահին նա կլինի իր տեղում, ուրախ պահին էլ կլինի իր տեղում, միշտ կլինի իր տեղում»,- սոցցանցի իր էջում գրել է Փաշինյանը

«Իր տեղում լինելը կախված չէ հանգամանքից, իր տեղում լինելը կախված է իր տեղի գիտակցումից, իր տեղի նկատմամբ պատասխանատվության եւ սեփականության զգացումից: Եւ դա մի տեղ է, որ հնարավոր չէ լրացնել, որովհետեւ դա միայն իր տեղն է: Եւ մենք կզգանք քո ներկայությունը մեր կողքին: Ննջի՛ր խաղաղությամբ, Եղբայր»,- գրել է նա:

Հիշեցնենք, որ Մաթեւոս Ասատրյանը հանկարծամահ է եղել նոյեմբերի 6-ին: «Ժողովուրդ» օրաթերթը հայտնեց, որ դեպքը տեղի է ունեցել Մաթեւոս Ասատրյանի տան այգում: Ընկերներով, ընտանիքներով հավաքված են եղել: Այնտեղ է եղել նաեւ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովն ընտանիքի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ասատրյանը շատ հանկարծակի իրեն վատ է զգացել, տեղում հավաքված մարդիկ՝ կանայք, Ալեքսեյ Սանդիկովը, փորձել են օգնել, առաջին օգնություն ցույց տալ մինչեւ շտապ օգնության գալը, սակայն ապարդյուն: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մինչ շտապ օգնության գալը Մաթեւոս Ասատրյանը մահացել է հենց Սանդիկովի ձեռքերում: Հիշեցնենք, որ Մաթեւոս Ասատրյանն ամուսնացած էր, ուներ 3 երեխա:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻՑ

Սեպտեմբերի 19-20-ի ռազմական ագրեսիայի հետեւանքով Ադրբեջանի կողմից գերեվարված 16 անձանց, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի ռազմաքաղաքական ղեկավարների, զինվորականների եւ խաղաղ բնակիչների վերաբերյալ տեղեկություններ են փոխանցվել նրանց ընտանիքներին: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին հայտնել են Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչությունից: Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչությունից նշել են, որ գերեվարված անձանց հարազատներին են տրամադրվել նրանց առողջական վիճակի, պահման պայմանների մասին տվյալներ, նաեւ նրանց լուսանկարները: Սեպտեմբերի 27-ին Լեռնային Ղարաբաղից Հայաստան տեղափոխվելու ընթացքում ադրբեջանցիների կողմից Լաչինի միջանցքում տեղակայված ապօրինի անցակետից առեւանգվել են Լեռնային Ղարաբաղի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը եւ Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի նախկին հրամանատարի առաջին տեղակալ, գեներալ-մայոր Դավիթ Մանուկյանը, այնուհետեւ՝ գեներալ լեյտենանտ Լեւոն Մնացականյանը, իսկ հոկտեմբերի 3-ին հայտնի դարձավ Լեռնային Ղարաբաղի նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանի, Բակո Սահակյանի, Լեռնային Ղարաբաղի ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանի, Արայիկ Հարությունյանի առեւանգման մասին: Լեռնային Ղարաբաղի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանը սեպտեմբերի 28-ին որոշել էր հանձնվել Ադրբեջանի իրավապահ մարմիններին:

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՍՏԱԿ ՔԱՅԼԵՐՆ ՈՒ «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ»

Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ընդունել է Կովկասյան բանակցությունների հարցերով ավագ խորհրդական, ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Լուիս Բոնոյին: Հանդիպմանը ներկա էր նաեւ Հայաստանում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը:

Կառավարությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ հանդիպման ընթացքում քննարկվել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավելի քան 100.000 փախստականների հիմնական կարիքները եւ դրանց բավարարմանն ուղղված Կառավարության ջանքերը:

Փոխվարչապետը Լուիս Բոնոյին ներկայացրել է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը՝ ընգծելով դրա իրականացման արդյունքում տարածաշրջանի զարգացման հեռանկարները:

Իսկ մինչ իշխանական թեւի ներկայացուցիչները «Խաղաղության խաչմերուկ» են պահանջում, խնդրում ու առաջարկում, Ադրբեջանն իր գործն անում է:

Մասնավորապես՝ Ադրբեջանում Ուկրաինայի դեսպան Վլադիսլավ Կանեւսկին հերթական հակահայկական հայտարարությունն է արել:

Ուկրաինացի «դիվանագետը» ֆեյսբուքյան իր էջում կատարած գրառմամբ շնորհավորանքներ է հղել «Հաղթանակի օրվա» կապակցությամբ եւ գովաբանել Ադրբեջանի ժողովրդին ու իշխանություններին:

Ի թիվս այլ բաների՝ Վլադիսլավ Կանեւսկին գրում է. «Այն ժամանակ ուկրաինացիները ջախջախեցին թշնամուն՝ ադրբեջանցիների հետ ուս ուսի կանգնած, իսկ այսօր էթնիկ ադրբեջանցիները մարտի դաշտում պաշտպանում են Ուկրաինայի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը»:

Մեջբերումը ներկայացված է այնպես, ինչպես այն գրվել է, եւ, ըստ երեւույթին, հուշում է, որ «ժամանակին ուկրաինացիները, ադրբեջանցիների հետ ուս ուսի կանգնած, հաղթեցին թշնամուն, իսկ այսօր էթնիկ ադրբեջանցիները մարտադաշտում պաշտպանում են Ուկրաինայի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը»: Թեեւ «թշնամին» ուղղակիորեն նշված չէ, սակայն ակնհայտ է, որ խոսքը հայերի մասին է՝ հաշվի առնելով, թե ինչ ամսաթվի է նվիրված շնորհավորանքը:

Սա առաջին դեպքը չէ, երբ Բաքվում Ուկրաինայի դեսպանը տրվում է հակահայկական դեմարշների: Անցյալ տարի դեսպանատունը հրապարակել էր մի ամբողջ տեսանյութ՝ գովաբանելով Ադրբեջանի ագրեսիան հայերի դեմ:

Դեսպանի էջում կա նաեւ ուկրաինական համայնքի հայտարարությունը՝նոյեմբերի 7-ով, շնորհավորանքներով եւ ուրախությամբ Շուշիի, Հադրութի եւ Լեռնային Ղարաբաղի այլ բնակավայրերի օկուպացիայի կապակցությամբ:

Ադրբեջանը հստակ քայլերով առաջ է գնում այս ֆոնին միջազգային հարթակներում:

Ֆրանսիական «Le Figaro» պարբերականի փոխտնօրեն Ժան-Քրիստոֆ Բուիսոնն անարգանք է որակել ՅՈՒՆԵՍԿՕ-ում կատարվածը:

«ՅՈՒՆԵՍԿՕ-ն նպատակահարմար չհամարեց դատապարտել ադրբեջանցիների 9 ամիսների շրջափակումը, որի ընթացքում խաթարվեց հազարավոր հայ երեխաների ուսումնական գործընթացը: Իսկ հիմա այն Ադրբեջանին ընտրում է իր Գլխավոր կոնֆերանսի փոխնախագահի պաշտոնում: Անարգանք»,-գրել է նա X-ի իր միկրոբլոգում:

Գրառման ներքո մեկնաբանություն կատարած օգտատերերը նշել են. «Սարսափելի է», «Հաստատությունները կորցնում են պատիվն ու վստահությունը», «Զզարմանաք, եթե մի քանի օր անց պարզվի, որ հսկայական գումար է նվիրաբերվել ՅՈՒՆԵՍԿՕ-ին...»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՇԱՐԺԸ ԿԴԱՆԴԱՂԻ ⇨



Ռուս-վրացական սահմանի Վերին Լարսի անցակետով երթեւեկությունը նոյեմբերի 13-ից մինչեւ ամսվա վերջ որոշակի խոչընդոտներ կունենա ճանապարհի վերանորոգման պատճառով:

Այս մասին հայտնում է Ռուսաստանի Դաշնային մաքսային ծառայությունը՝ հավելելով, որ նախատեսվում է անցակետ տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներ իրականացնել Վրաստանից Ռուսաստանի տարածք մուտքի կողմից: Ճանապարհի առանձին հատվածներ ժամանակավորապես կփակվեն, ինչն էլ կհանգեցնի ավտոմեքենաների հոսքերի դանդաղ ընթացքին:

ԴԻՄԵԼ Է ԴԱՏԱԽԱՋԻՆ

Հաշվի առնելով, որ լայն տարածում են ստացել Արցախի պաշտոնատար անձանց կողմից առերեւույթ հանցագործություններ կատարելու մասին հրապարակումները եւ հանգամանքը, որ Արցախի իշխանությունները շահագրգռված են պաշտոնատար անձանց կողմից կատարված հնարավոր չարաշահումները բացահայտելու եւ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու հարցում՝ նախագահ Սամվել Շահրամանյանը նամակով դիմել է ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին՝ խնդրանքով, որ նմանատիպ հրապարակումները ՀՀ դատախազությունն ընդունի որպես հանցագործության մասին հաղորդումներ եւ դրանք քննության առնի օրենսդրությամբ սահմանված կարգով: Այս մասին հայտնում են Արցախի տեղեկատվական շտաբից:

ԱԶԱՏԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Ցոլակ Ակոպյանի լիազորությունները՝ որպես Երեւանի Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի պրոռեկտորի, երեկվանից դադարեցվել են: Լրագրողների հետ զրույցում նա հայտնեց, որ երեկ իր աշխատանքային վերջին օրն էր: Նա իր ազատման հրամանն անվանեց «իրավաբանության գլուխգործոց». «Ինձ ազատել են աշխատանքից Աշխատանքային օրենսգրքի հետեւյալ դրույթով, թե, իբր, ես չեմ համապատասխանում իմ պաշտոնին: Շուրջ 11 տարի տարբեր պաշտոններ եմ զբաղեցրել այս համալսարանում, ընթացքում ստացել եմ նույնիսկ համալսարանի մեդալ, շնորհակալագրեր, եւ հանկարծ Դավիթ Գյուրջինյանի կողմից պարզվեց, որ ես չեմ համապատասխանում իմ պաշտոնին: 4 հիմնավորում է բերվել, թե ինչու չեմ համապատասխանում: 2 հիմնավորումը վերաբերում է քրեական գործերին, որոնց մասին խոսել եմ: Սակայն, ես դեռեւս չեմ հարցաքննվել, կարգավիճակ չունեմ, բայց մարդն արդեն խախտում է իմ անմեղության կանխավարկածը: Մարդը դատավոր է դարձել եւ որոշումներ է կայացնում»:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ո՞Վ ԷՐ ՎԹԱՐԻՑ ՄԱՀԱՑԱԾ ՎԱՐՈՐԴԸ

Երեկ Երեւանում ողբերգական վթարից մահացած՝ «ՎԱԶ 2101»-ի վարորդը «Հարսնաքար» ռեստորանային համալիրում դաժան ծեծի հետեւանքով 2012թ.-ին մահացած ռազմական բժիշկ Վահե Ավետյանի հայրն է՝ Գառնիկ Ավետյանը:

Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ նրա մեքենային հարվածած Nissan Rogue-ի վարորդը եղել է կին, որը, ըստ լուրերի, անգամ զրկված է եղել վարորդական իրավունքի վկայականից:

Shamshyan.com-ը գրել է, որ նոյեմբերի 8-ին խոշոր ու ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 07:10-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության 9-11 ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Կարապետ Ուլնեցի-Պարույր Սեւակ փողոցների խաչմերուկում ավտովթար է տեղի ունեցել, եւ կան տուժածներ:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն ժամանել է Երեւանի թիվ 5-րդ հրշեջ-փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ:

Վթարի հետեւանքով 3 հոգի՝ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով, տեղափոխվել են 1 հոգի Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ, 2 հոգի՝ Քանաքեռ-Զեյթուն բժշկական կենտրոն:

Վիրավորներից 2-ին դուրս են բերել ավտոմեքենաներից եւ պատգարակներով մոտեցրել շտապօգնության ավտոմեքենաներին:

Պարզվել է, որ բախվել են Nissan Rogue եւ «ՎԱԶ 2101» մակնիշի ավտոմեքենաները, որից հետո Nissan-ը բախվել է ճանապարհի թույլատրելի հատվածում կայանված Volkswagen Passat-ին, վերջինն էլ, առաջ ընթանալով, բախվել է ճանապարհի թույլատրելի հատվածում կայանված Nissan X-Trail-ին: Մինչ դեպքի վայրում աշխատում էր քննչական խումբը, հիվանդանոցից ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ վիրավորներից մեկը, գիտակցության չգալով, մահացել է: Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ մահացածը «ՎԱԶ 2101»-ի վարորդն է եղել: Եվ, ահա, Երեւանում ողբերգական վթարից մահացած «ՎԱԶ 2101»-ի վարորդը «Հարսնաքար» ռեստորանային համալիրում դաժան ծեծի հետեւանքով 2012թ.-ին մահացած ռազմական բժիշկ Վահե Ավետյանի հայրն է՝ Գառնիկ Ավետյանը: Նշենք, որ Վահե Ավետյանի մայրն էլ մահացել է անցած տարի:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅՏՆԵՑ

ՆՈՐ ՊԱՇՏՈՆ ԿՍՏԱՆԱ

Երեկ Բարձրագույն դատական խորհուրդը հայտնեց, որ նոյեմբերի 6-ին որոշում է ընդունել, որում ասվում է. «2023 թվականի նոյեմբերի 6-ին, դռնփակ նիստում քննարկելով Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղը համալրելու նպատակով վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի՝ քրեական մասնագիտացման բաժնում ընդգրկված անձի թեկնածությունը եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին եւ 5-րդ մասերով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 125-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 129-րդ եւ 117-րդ հոդվածներով՝ Բարձրագույն դատական խորհուրդը որոշում է՝

1.Հանրապետության նախագահին առաջարկել Վաչե Վանիկի Մարգարյանի թեկնածությունը՝ Վերաքննիչ քրեական դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղում նշանակելու համար:

2. Սույն որոշման 1-ին կետով ներկայացված առաջարկի վերաբերյալ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 117-րդ հոդվածով սահմանված կարգով Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելու պահից Վաչե Վանիկի Մարգարյանին հանել վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակից, ինչպես նաեւ Վաչե Վանիկի Մարգարյանի՝ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորի լիազորությունները համարել դադարած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից»:

Հիշեցնենք, որ դատավոր Մարգարյանի անունը շոշափվում էր ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի եւ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի հեռախոսազրույցում, քանի որ նա է բավարարել ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը:

Հիշեցնենք, որ դատավոր Մարգարյանը հայտարարություն էր տարածել՝ ասելով, որ ինքը երբեւէ չի զանգել ԱԱԾ պետին, ու դա ասում է ամենայն պատասխանատվությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ԴԱՏԻ Է ՏՎԵԼ ԴԱՏԱԽԱԶԻՆ

Ֆինանսների նախկին նախարար Վարդան Խաչատրյանի դատախազ եղբայրը դատի է տվել գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին: Վերջինս, դիմելով ՀՀ վարչական դատարան, պահանջում է, որ Աննա Վարդապետյանի 07.08.2023 թ. թիվ 366-Ա հրամանը (այն է՝ հայցվորին ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի պաշտոնից ազատելու փոխարեն՝ նշել վերջինիս Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի պաշտոնից ազատելու մասին) փոփոխելուն պարտավորեցնել:

Օգոստոսի 10-ին դատախազությունը հայտնեց, որ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը օգոստոսի 7-ին հրաման է ստորագրել, որով պաշտոնից ազատել է Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Սիսակ Խաչատրյանին:

Նշենք, որ նա ֆինանսների նախկին նախարար Վարդան Խաչատրյանի եղբայրն է, եւ դեռ ավելին՝ նրա մասին անգամ հրապարակային հայտարարել էր դերասան Մարկ Սաղաթելյանի այրին՝Նունե Միքայելյանը, եւ հայտնել, որ անելանելի վիճակում է հայտնվել. «Կարեն Մանուկյանը, որն Արաբկիրի դատախազ Սիսակ Խաչատրյանի կնոջ՝ Լուսինե Մանուկյանի եղբայրն է, իր կնոջ՝ Լոլիտա Մանուկյանի հետ ինձնից հետ վերադարձնելու պայմանով վերցրել են 141 հազար ԱՄՆ դոլար, որից հետո Երեւան քաղաքի Վահագնի թաղամասում իրենց բնակարանը ինձ վաճառելու պատրվակով կրկին վերցրել են 100 000 դոլար, սակայն բնակարանը չեն վաճառել, եւ այդ գումարներից վերադարձրել են ընդամենը 74 000 ԱՄՆ դոլարը»:

Նունե Միքայելյանը նշել էր, որ մտավախություն ու կասկածներ ունի, թե գործում խառնված է Արաբկիրի դատախազ Սիսակ Խաչատրյանը եւ փորձում է օգնել իր մտերիմներին, որ չպատժվեն. «Ես այլ ելք չունեի, այս մասին բարձրաձայնում եմ, որ իրավապահ մարմինները աչալուրջ լինեն եւ քրեական գործը ծածկադմփոց չանեն»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈՐԾԸ ԿԱՐՃՎԵՑ

Փաստաբան Արսեն Սարդարյանը գրում է, որ 2020թ. հոկտեմբերի 7-ին իրականացված հակահարձակման դրվագով հանրային քրեական հետապնդումը ՊԲ նախկին հրամանատար Ջ. Հարությունյանի նկատմամբ դադարեցվեց՝ արդարացնող հիմքով: Շուրջ 306-էջանոց ռազմագիտական հանձնաժողովային փորձագիտական եզրակացությամբ թվով 11 փորձառու ռազմագետների կողմից միակարծիք փաստվեց, որ Ջ. Հարությունյանի գործողություններում հակահարվածի դրվագով հանցակազմ չկա:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթն ավելի վաղ գրել էր, որ վերոհիշյալ գործը կարճվելու է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 7-ից 8-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 88 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ Է

Իջեւանի դենդրոպարկը ստեղծվել է 1960 թվականին կենսաբանական գիտությունների թեկնածու Լյուդվիդ Սայադյանի կողմից, որը երկար տարիներ տնօրինել է դենդրոպարկը: Սայադյան ընտանիքի երեք սերունդներն իրենց աշխատանքով, քրտինքով, ֆինանսական միջոցներով զարգացրել, հարստացրել են դենդրոպարկը, ավելացրել այգու տեսականին: Լյուդվիգ Սայադյանի որդին՝ Իջեւանի դենդրոպարկի երկարամյա տնօրեն, այժմ աշխատանքից ազատված Մեխակ Սայադյանը, մտադիր է դենդրոպարկը փրկելու համար մինչեւ վերջ պայքարել: Նա հայտնեց, որ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի տերերը Իջեւանի դենդրոպարկի (բուսաբանական այգու) ոռոգման համակարգն ավերել են, Աղստեւ գետի հունը ավերել են 800 մետր երկարությամբ, մոտ 50 հազար խորանարդ մետր հող են հանձնել Աղստեւ գետին, այդքան հող գետի հոսքով գնացել է Ադրբեջան, դենդրոպարկի տարածքում մոտ 1500 ծառ ու թուփ է չորացել, դենդրոպարկի արժեքավոր եւ հազվագյուտ հավաքածուից 250 տեսակ վերացել է, 24 հազար տնկի է չորացել, ծառայգու տարածքից 5,7 հեկտար ապօրինի խլել, տվել են պետությանը եւ բնությանը տասնյակ միլիարդների դրամ վնաս հասցրած Իջեւանի գինու, կոնյակի գործարանին, դենդրոպարկի բոլոր 4 աշխատողներին աշխատանքից ազատել են, օրենքներ են խախտել, պետության սեփականությունը հանդիսացող ունեցվածքը եւ գույքը անտեր թողել:

Նա ասաց, որ «Արգելանոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինությունը Իջեւանի բուսաբանական այգին վերացնում է, պատրաստվում է նաեւ Ստեփանավանի դենդրոպարկը վերացնել: Մ. Սայադյանի վկայությամբ՝2023 թ. հուլիսի 6-ից մինչեւ հիմա Իջեւանի դենդրոպարկի վերաբերյալ իր պատրաստած խիստ քննադատական տեսանյութերը համացանցում մոտ 200 հազար դիտումներ են ունեցել: Մ. Սայադյանը հայտնեց. «Ես պայքարել եւ պայքարելու եմ, մինչեւ չվերականգնվի այգուս կոլեկցիան, չվերականգնվեն պետությանը եւ ընտանիքիս հասցված վնասները, մինչեւ չվերականգնվեն իմ եւ աշխատակիցներիս իրավունքներն ու հասցված վնասները: Հասնելու եմ նաեւ հորս, իմ, եւ տղայիս մտավոր սեփականությունների գնահատմանը»:

ԵՐԿԻՐՃԽԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի որոշումներով՝ մարզի Նավուրի, Դեբեդավանի, Այգեձորի հանրակրթական դպրոցներում նշանակվել են վարչատնտեսական մասի համակարգողներ: Այդ համակարգողները կառավարելու են դպրոցների ֆինանսական, նյութական ռեսուրսները, իսկ դպրոցների տնօրենները ղեկավարելու են աշակերտների կրթական, դաստիարակչական, աշխատանքները, մանկավարժական կոլեկտիվը: Հանրակրթական դպրոցներում, փաստորեն, սահմանվում է երկիշխանություն:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՍՏԱԿԵՑՎԵԼ Է ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով՝ փոփոխություններ են կատարվել Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու եւ ազատելու կարգում:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝այս մասին հայտնում են ԿԳՄՍ նախարարությունից, հիշեցնելով, որ նախորդ կարգավորմամբ՝դպրոցին լիցենզիայով տրված տեղերում փոփոխության առաջարկի համար սահմանված էր ժամկետ՝ մինչեւ տվյալ տարվա մայիսի 20-25-ը, որի ընթացքում տնօրենները կարող էին դիմել լիազոր մարմնին՝ հիմնավորելով լիցենզիայով տրված տեղերի ավելացման պահանջը, սակայն այս ժամկետը հնարավորություն չէր տալիս փոփոխություններ կատարել ավելի ուշ, երբ դպրոցի համար հայտագրված սովորողների թիվը հստակ էր: Նոր կարգավորմամբ կրթության կառավարման պետական լիազոր մարմնին հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանի լիցենզիայով տրված սահմանային տեղերի վերաբաշխման առաջարկի ներկայացման ժամկետ է սահմանվել մայիսի 20-25-ը եւ օգոստոսի 20-25-ը առաջին դասարանի ընդունելության տեղերի հատկացման նպատակով: Ժամկետը երկարաձգվել է, քանի որ այդ ժամանակահատվածում տնօրենները հստակ գիտեն՝ տարրական օղակում լիցենզիայով սահմանված որքան տեղեր կարող են ավելացնել:

Կարգավորված չէր նաեւ առաջնահերթություններ ունեցող սովորողներին հաստատություն լիցենզիայով սահմանված տեղերի շրջանակում ընդգրկելու հարցը: Ավելացվել է դրույթ, որի համաձայն՝ առաջնահերթություն ունեցողները կարող են հաստատություն ընդունվել, եթե դպրոցը լիցենզիայով սահմանված տեղեր ունի՝բացառությամբ այն դեպքի, երբ տվյալ հաստատությունը բնակավայրում միակը չէ, կամ բնակավայրում գործող բոլոր ուսումնական հաստատությունների՝ տվյալ կրթական մակարդակի համար լիցենզիայով տրված սահմանային տեղերը ազատ չեն:

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնում է, որ հաջորդ փոփոխությունը կապված է հանրակրթության մեջ ժամկետից ուշ սովորողի ընդգրկման հետ, ըստ որի՝ մինչեւ տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը 8 տարին ներառյալ լրանալու դեպքում երեխան հաճախում է տարիքային խմբին համապատասխան դասարան՝նախորդ կարգավորմամբ գործող 1-ին դասարանի փոխարեն:

Ներկայում քոլեջի կամ ուսումնարանի սովորողը ցանկացած դասարանում եւ ցանկացած պահի կարող է տեղափոխվել դպրոց, որը լրացուցիչ խնդիրներ է առաջացնում ուսումնական նյութի յուրացման եւ ուսումնական գործընթացում ընդգրկվելու տեսանկյունից, ինչից ելնելով՝ հստակեցվել են նաեւ քոլեջից կամ ուսումնարանից հանրակրթական ուսումնական հաստատություն աշակերտների տեղափոխման հետ կապված հարցերը:

ԱՆՑՅՈՒԴԱՐՁ

ՏԱՊԱԼՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար ահազանգներ է ստանում, որ ԿԳՄՍ նախարարությունը, տապալելով գրքերի տպագրությունները, տապալել է նաեւ դրանց բովանդակային հատվածը: «Ժողովուրդ» օրաթերթին դիմած ծնողները փաստում են, որ 9-րդ դասարանի «Հասարակագիտություն» առարկայի դասագրքում 15-16 տարեկան երեխաների համար նախատեսված է վերլուծության ձեւեր: Ծնողների բողոքի մեխն այն է, որ նրանց համար անհասկանալի է, թե ինչ է պահանջվում անել, եւ ինչ կապ ունեն «Տպագիր աղբյուրներից տեղեկույթի վերլուծության ձեւը» առարկայի հետ:

Այս դասագիրքը նոր չէ, իրապես այս դասագիրքը տպագրվել եւ հրատարակվել է 2014 թվականին: Գիրքը երաշխավորված է նախկին Կրթության եւ գիտության նախարարության կողմից: Գրքում հանդիպում են քաղաքական ենթատեքստերով վերլուծություններ ենթադրող առաջադրանքներ, ինչն էլ բողոքի ալիք է բարձրացրել:

Կա 2014 թվականին հրատարակված 2 դասագիրք, որոնք այն ժամանակ երաշխավորվել էին Կրթության եւ գիտության նախարարության կողմից: Դասագրքերի բովանդակությունները եւ հեղինակները տարբեր են, եւ ընտրությունը, ինչպես միշտ, թողնվել է դպրոցի վրա, ինչպես նոր տպագրված դասագրքերի դեպքում: Այսինքն՝ ամեն նոր տպագրվող դասագիրք ունի նաեւ մեկ այլ հեղինակի կողմից ստեղծված եւ նախարարության կողմից հաստատված օրինակ, եւ դպրոցը կարող է դրանց մեջ ընտրություն կատարել:

Հիշեցնենք նաեւ, որ նոր տպագրված դասագրքերի ցանկում են 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանի դասագրքերը, որոնց վերաբերյալ ստացած բողոքներին «Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար անդրադարձել է եւ անդրադառնում է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՄԵՆԱՏԱՔ ԱՇՈՒՆՆԵՐԻՑ

Աշխարհում այս տարվա հոկտեմբերը դարձել է ամենատաքը եղանակի դիտարկումների ամբողջ պատմության ընթացքում: Միջին ջերմաստիճանը կազմել է ըստ Ցելսիուսի 15,30 աստիճան. այս մասին հաղորդում է «Ժողովուրդ» օրաթերթը՝ վկայակոչելով Եվրոպայի կլիմայի փոփոխության Copernicus ծառայության տեղեկագիրը:

«2023 թվականի հոկտեմբերը դարձել է ամենատաքն աշխարհում դիտարկումների ամբողջ պատմության ընթացքում. մթնոլորտի ստորին շերտերում օդի միջին ջերմաստիճանը կազմել է Ցելսիուսի սանդղակով 15,30 աստիճան, ինչը 0,85 աստիճանով բարձր է 1991-ից մինչեւ 2020 թվականն ընկած ժամանակահատվածում հոկտեմբերի միջին ջերմաստիճանից եւ 0,40 աստիճանով բարձր՝ նախորդ՝ 2019 թվականին գրանցված ամենատաք հոկտեմբերից», - ասված է ծառայության կայքում հրապարակված տեղեկագրում: Օդերեւութաբանները նշում են, որ ամիսն, ընդհանուր առմամբ, 1,7 աստիճանով ավելի տաք է եղել, քան հոկտեմբերի միջին ջերմաստիճանը նախաարդյունաբերական շրջանում՝ 1850-1900 թվականներին: Ծովի մակերեւույթի ջերմաստիճանը նույնպես հասել է հոկտեմբերի համար ռեկորդային մեծության՝ Ցելսիուսի սանդղակով 20,79 աստիճանի:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 16-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԲՅՈՒՋԵ

ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԸ ԿՆԵՐԱՌՎԵՆ

Հայաստանի Հանրապետության 2024թ. պետական բյուջեի նախագծում կներառվեն նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց թոշակների եւ նպաստների գծով ծախսերը, ինչը կենսաթոշակային ծախսերը կավելացնի մոտ 30 մլրդ դրամով:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ասաց ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկմանը:

Ֆինանսների նախարարը հիշեցրեց, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայրենակիցների հետ կապված ծախսերը ներկայացված նախագծում ներառված չեն: Պատճառն այն է, որ բյուջեն կառավարության կողմից հաստատվել է սեպտեմբերի վերջին:

«Այդ օրերին ժամանակ չունեինք, որ նոր ծրագրեր նախագծեինք: Մարդկանց քանակի եւ իրավիճակի վերաբերյալ հստակ պատկեր չկար: Ըստ այդմ, քննարկեցինք, որ երկրորդ ընթերցմամբ նախագիծը քննարկելուց առաջ կներկայացնենք նաեւ այդ հավելյալ ծախսերը: Մենք կներառենք Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների թոշակների եւ նպաստների գծով ծախսերը, որը կավելացնի մեր կենսաթոշակային ծախսերը մոտ 30 մլրդ դրամով»,- ասաց Հովհաննիսյանը:

Կառավարությունը նոյեմբերի 9-ին կհաստատի կենսաթոշակների օրենքի փոփոխությունների վերաբերյալ նախագիծը, որը կուղարկեն Ազգային ժողով: Դա հնարավորություն կտա աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը ԼՂ-ից բռնի տեղահանված թոշակառուների թոշակները վճարել այնպես, ինչպես եղել է այն ժամանակ, երբ նրանք գտնվել են Լեռնային Ղարաբաղում:

ԿՈՒՂՂՎԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

Հայաստանում 2024թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված կապիտալ ծախսերի 41 տոկոսը հաջորդ տարի կուղղվի պաշտպանության ոլորտին:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ասաց ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկմանը:

2024 թվականին կապիտալ ծախսերն ավելանում են եւ դառնալու են 710 մլրդ դրամ: «Կապիտալ ծախսերի 41 տոկոսն ուղղվելու է պաշտպանության ոլորտին»,-ասաց նախարարը:

Հովհաննիսյանը նշեց նաեւ, որ պաշտպանության ոլորտին հատկացնելու են 555 մլրդ դրամ. դա 7 տոկոսով ավելին է, քան 2023 թվականին:

«Պաշտպանության ծախսերը համախառն ներքին արդյունքում կկազմեն 5.3 տոկոս»,- նշեց նախարարը:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Կառավարությունը նախատեսում է տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առեւտրային ընկերություններին տրամադրել պետական աջակցություն: Միջազգային կառույցների կողմից մշակված ցուցիչների համաձայն՝ առանձնացվելու են այն ապրանքները, որոնց արտադրությունը համարվում է տնտեսապես բարդ: Այդ ժամանակ հաշվի են առնվում ապրանքների արտադրության մեջ գիտատարության աստիճանը, արտահանման հնարավորությունները, միջազգային առեւտրի կառուցվածքում հարաբերական մրցակցային առավելությունը, ինչպես նաեւ այն, որ տվյալ ապրանքներն ազխարհում քիչ երկրներ են արտահանում եւ այլն: ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Անի Իսպիրյանը նշեց, որ նպատակ ունեն, նման ապրանքներ արտադրող ընկերություններին աջակցելով, նպաստել արտադրությունների արդիականացմանը, ինչպես նաեւ արտահանման դիվերսիֆիկացիային:

«Հիմնական ակնկալիքը տնտեսվարողների արտադրությունների արդիականացնումն է՝ հոսքագծեր, սարքավորումներ, արտադրամասեր: Այստեղ խոսքը կապիտալ ներդրումների մասին է, ինչն էլ հենց ենթադրում է արտադրության ենթակառուցվածքների արդիականացում: Հաջորդ նպատակը արտահանման դիվերսիֆիկացիան է: Այսինքն՝ արդյունքում ակնկալում ենք ունենալ նոր որակի ապրանքներ, որոնք կլինեն մրցունակ, եւ առաջխաղացում կգրանցվի արտահանման գծով»,-ասաց Անի Իսպիրյանը:

Տնտեսվարողներին աջակցությունը տրամադրվելու է հետեւյալ կերպ. ծրագրով առաջարկվում է սահմանել ներդրումների ծավալի նվազագույն շեմ՝ 1 մլրդ դրամ, ընդ որում՝ ներդրումները պետք է իրականացված լինեն աջակցման մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո: Ծրագրի շրջանակում աջակցությունը տրամադրվելու է 3 փուլով: Առաջին փուլում, երբ ներդրողը կսկսի իր արտադրությունը, կտրամադրվի աջակցություն կատարված ներդրումների 10 տոկոսի չափով: Երկրորդ փուլում, երբ ընկերության արդեն իրացումը կհասնի կատարված ներդրումների 10 տոկոսին, ապա այդ դեպքում կտրվի 5 տոկոսի չափով աջակցություն, 3-րդ փուլում կառավարությունը նախատեսում է տրամադրել շահութահարկի 100 տոկոսի, եկամտահարկի 50 տոկոսի չափով գումար:

«Ի դեպ, այս վերջին փուլի աջակցությունը կարող է տրվել այնքան ժամանակ, մինչեւ աջակցության ընդհանուր չափը հասնի կատարված ներդրումների 20 տոկոսին: Այստեղ ուզում եմ ընդգծել, որ ծրագրի շահառու լինելու համար ապրանքների ծագման երկիրը, ներդրումների կատարման վայրը պետք է լինի Հայաստանի Հանրապետությունը»,-ասաց նախարարի տեղակալը:

Նա տեղեկացրեց, որ նշված ապրանքների ցանկը կհաստատվի մինչեւ նոյեմբերի վերջ, ու այդ ժամանակ էլ տնտեսվարողները կարող են դիմել նախարարություն ծրագրի շահառու դառնալու նպատակով: Տնտեսվարողները հետ ստացած գումարները կարող են տնօրինել, ինչպես ցանկանում են:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՊԵՏԲՅՈՒՋԵԻՆ

Ազգային ժողովի ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը դրական եզրակացություն տվեց «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի նախագծին:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ օրեր շարունակ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում նախագծի քննարկումից հետո գլխադասային հանձնաժողովում բյուջեի նախագիծը ներկայացրեց ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

Նախարարն ասաց, որ իրենց քաղաքականությունը եւ մոտեցումն ուղղված են առաջին հերթին կառավարության ծրագրով նախանշված միջոցառումների պատշաճ իրականացմանը:

«Եվ այս բյուջեում ամենակարեւոր տեղն ունի դպրոցաշինության ծրագիրը: Բնականաբար, բոլոր ծախսերն ու միջոցառումները պետք է իրականացնենք այնպես, որ մեծացնենք Հայաստանի տնտեսության ներուժը, որ կարողանանք հետագայում ավելի մեծ տնտեսական աճ ապահովել՝ միաժամանակ պահպանելով հարկաբյուջետային կայունությունը, կառավարելի պահելով պարտքի մակարդակը եւ ամեն ինչ անելով, որ պարտքի մակարդակը պահպանենք 50 տոկոսից ցածր մակարդակում»,-ասաց Հովհաննիսյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ներկայացված նախագծով նախատեսվում է, որ բյուջեի պակասուրդը կկազմի 3.2 մլրդ դրամ:

«Բայց հաշվի առնելով հավելյալ ծախսերի պահանջը եւ ակնկալվող ծրագրերը՝ մենք նախատեսել ենք, որ նախկինում Լեռնային Ղարաբաղին ուղղվող աջակցության ամբողջ գումարը՝ 144 մլրդ դրամը, դեֆիցիտից կբարձրանա վերեւ եւ կհայտնվի մեր ծախսերի մեջ՝ որպես աջակցություն մեր հայրենակիցներին: Դրա արդյունքում մենք մյուս տարի կունենանք 4.6 տոկոս դեֆիցիտ»,-ասաց նախարարը:

Նա վստահեցրեց, որ դա ֆիսկալ վիճակի վրա էական ազդեցություն չի ունենա: Գումարները, որոնք նախկինում տրամադրում էին որպես վարկային միջոցներ, հիմա կտրամադրեն որպես ծախս. այդ ծախսն արդեն պետք է իրականացնի Հայաստանի Հանրապետությունը:

Հարկային եկամուտները 2024թ. պետական բյուջեի նախագծով պլանավորվում են 2 տրլն 566 մլրդ դրամի չափով: Նախարարը հավանական համարեց, որ այդ գումարը կավելանա: Նպատակ ունեն հիփոթեքային վարկերի գծով տրամադրվող հետվերադարձն արտացոլել բյուջեում:

Ընթացիկ ծախսերը կկազմեն 2 տրլն 321 մլրդ դրամ, իսկ կապիտալ ծախսերը՝ 710 մլրդ դրամ:

Բյուջեի նախագիծը հանձնաժողովում ստացավ 4 կողմ, 1 դեմ ձայներ: Այն քննարկվի ԱԺ լիագումար նիստում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ո՞Վ ԿԴԱՌՆԱ ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀ

Նոյեմբերի 7-ին տեղի ունեցավ ՀՖՖ գործադիր կոմիտեի հերթական նիստը: Օրակարգի միակ հարցը ՀՖՖ 24-րդ հերթական ժողովի անցկացման վայրի, օրվա եւ ժամի հաստատումն է եղել:

Որոշվել է ՀՖՖ հերթական ժողովն անցկացնել դեկտեմբերի 23-ին՝ ժամը 13:00-ին, ՀՖՖ գրասենյակում:

ՀՖՖ նախագահի պաշտոնավարման ժամկետի լրացմամբ պայմանավորված՝ նախատեսվող ՀՖՖ 24-րդ հերթական ժողովն ընտրական է:

Համաձայն ՀՖՖ կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՀՖՖ ժողովի յուրաքանչյուր անդամ կարող է առաջարկել մեկ թեկնածու ՀՖՖ նախագահի տեղի համար:

ՀՖՖ նախագահի պաշտոնում առաջադրվելու համար թեկնածուները պետք է համապատասխանեն ՀՖՖ կանոնադրության 30-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված հետեւյալ պահանջներին.

ա) մինչեւ թեկնածու առաջադրվելը վերջին հինգ տարիներից երկուսի ընթացքում ակտիվ դերակատարում ունենալ ՀՀ-ում ֆուտբոլի բնագավառում (պաշտոնատար անձ (դիմելու պահին պաշտոնը չզբաղեցնող), նախկին ֆուտբոլիստ (դիմելու պահին կարիերան ավարտած) կամ սպորտում այլ կերպ ներգրավված անձ (մարզական լրագրող, մեկնաբան, իրավաբան եւ այլն),

բ) լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի եւ բնակվել պետության տարածքում,

գ) լինել առնվազն 25 տարեկան եւ ունենալ ՀՀ-ում ընտրական իրավունք,

դ) տվյալ պաշտոնի հետ անհամատեղելի որեւէ հանցագործության համար նախկինում դատապարտված չլինել,

ե) չգտնվել սնանկության գործընթացում:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի՝ դեկտեմբերին կայանալիք ընտրությունները կարող են անկանխատեսելի ընթացք ստանալ: Իհարկե, ընտրություն որակել այս գործընթացն այնքան էլ տեղին չէ, քանի որ ՀՖՖ նախագահ դառնում է իշխանական հովանավորություն ունեցողը միայն:

Մեզ փոխանցում են, որ կուլիսներում, որպես ՀՖՖ նախագահի թեկնածու, քննարկվել է ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի անունը: Լուրեր կան, որ նրա լոբբինգով զբաղվել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը: Այս անձի թեկնածության հետագա ճակատագրի հետ կապված՝ հստակություն ներկա պահին չկա. զուգահեռ քննարկվում է նաեւ Աննա Հակոբյանի հիմնադրամի ղեկավար, Սփյուռքի կոմիտեի նախկին ղեկավար Մխիթար Հայրապետյանի անունը, ում թեկնածությունն այս պահին կարծես ավելի հավանական է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ վարչապետը դժգոհ է ՀՖՖ ներկայիս նախագահի՝ Արմեն Մելիքբեկյանի գործունեությունից, ինչին գումարվում են խայտառակ փաստերը՝ ընդդեմ Մելիքբեկյանի:

ՀՖՖ-ից տրված բանկային քարտ կորցնող, ֆուտբոլային խայտառակ թվով հաշիվների, ֆուտբոլիստներին անտերության մատնած եւ ինքնամփոփ ու ոչ մեկի հետ չշփվող Մելիքբեկյանի ժամանակը կարծես սպառվել է: Ինչեւէ, հետեւենք ընթացքին:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՊՈՐՏ

ԿԿԱՅԱՆԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում կկայանան A, B, C, D խմբերի 4-րդ տուրի հանդիպումները:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ A խմբում «Բավարիա»-ն սեփական հարկի տակ կընդունի «Գալաթասարայ»-ին, «Կոպենհագեն»-ը կխաղա «Մանչեսթեր Յունայթեդ»-ի հետ:

B խմբում կկայանան «Արսենալ»-«Սեւիլիա», «ՊՍՎ Էյնդհովեն»-«Լանս» հանդիպումները:

C խմբում «Նապոլի»-ն կընդունի «Ունիոն Բեռլին»-ին, Մադրիդի «Ռեալ»-ի մրցակիցը կլինի «Բրագա»-ն:

D խմբում «Ռեալ Սոսիեդադ»-ն ուժերը կչափի «Բենֆիկա»-ի հետ: «Զալցբուրգ»-ը սեփական հարկի տակ կխաղա «Ինտեր»-ի հետ:

Խմբային փուլի այս տուրի հանդիպումների մեծամասնությունը կմեկնարկի Երեւանի ժամանակով կեսգիշերին:

ՉԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում կայացան խմբային 4-րդ տուրի հանդիպումները:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ պայքարի մեջ մտան E, F, G, H խմբերի ակումբները:

E խմբում Մադրիդի «Ատլետիկո»-ն տանը խոշոր՝ 6:0 հաշվով գերազանցեց «Սելթիկ»-ին, իսկ իտալական «Լացիո»-ն նվազագույն հաշվով պարտության մատնեց «Ֆեյենորդ»-ին:

F խմբում Դորտմունդի «Բորուսիա»-ն 2 գնդակ ուղարկեց «Նյուքասլ Յունայթեդ»-ի դարպասը, իսկ «Միլան»-ն առավելության հասավ ՊՍԺ-ի նկատմամբ 2:1 հաշվով: G խմբում «Մանչեսթեր Սիթի»-ն 3 անպատասխան գնդակ ուղարկեց «Յանգ Բոյզ»-ի դարպասը, «Ցրվենա Զվեզդա»-ն 1:2 հաշվով զիջեց «Լայպցիգ»-ին:

Եվ H խմբում Դոնեցկի «Շախտյոր»-ը անսպասելի հաղթանակ տոնեց «Բարսելոնա»-ի նկատմամբ միայն մեկ գնդակի առավելությամբ (1:0), «Պորտու»-ն գերազանցեց «Անտվերպեն»-ին 2:0 հաշվով:

ԽԱՉԱՆՈՎԸ՝ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարեն Խաչանովը հաջող է մեկնարկել Ֆրանսիայի Մեց քաղաքում անցկացվող ATP-250 շարքի մրցաշարում: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ տղամարդկանց մենախաղում Խաչանովը մոտ 1,5 ժամ ձգված մրցախաղից հետո առավելության հասավ ֆրանսիացի Կոնստան Լետիենի նկատմամբ:

Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 13-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում: Նա Տոկիոյի 32-րդ ամառային օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է: Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստի լավագույն արդյունքը եղել է 2019 թվականին, երբ նա հասել է Rolan-Garros-ի քառորդ եզրափակիչ, եւ 2021 թվականին՝ դարձյալ քառորդ եզրափակիչ Ուիմբլդոնում, իսկ 2022-ին նա հասավ US Open-ի կիսաեզրափակիչ: 2023 թվականին էլ Խաչանովը դուրս մնաց AusOpen-ի կիսաեզրափակչից:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿԻ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ, համերգներով հանդես կգա Հունաստանում, ԱՄՆ-ում եւ Կանադայում:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝հյուրախաղերը նվիրված են հայ մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 120-ամյակին:

Մեր տեղեկություններով՝ համերգները կկայանան հետեւյալ հեղինակավոր համերգասրահներում՝ նոյեմբերի 12-ին՝ Աթենքի «Megaron» համերգասրահում, նոյեմբերի 13-ին՝ Սալոնիկի համերգասրահում, նոյեմբերի 15-ին՝ Նյու Յորքի «Քարնեգի հոլ»-ում, նոյեմբերի 17-ին՝ Տորոնտոյի «Ռոյ Թոմսոն հոլ»-ում, նոյեմբերի 19-ին՝ Մոնրեալի սիմֆոնիկ երաժշտության համերգասրահում (La Maison Symphonique), նոյեմբերի 21-ին՝ Բոստոնի սիմֆոնիկ հոլում: Ծրագրում ընդգրկված է Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտը, հատվածներ «Սպարտակ» բալետից, Ռախմանինովի Դաշնամուրի թիվ 3 կոնցերտը եւ Սիմֆոնիա թիվ 5-ը:

Համերգների մենակատարներն են համաշխարհային մեծ համբավ ունեցող հայ երաժիշտներ դաշնակահար Սերգեյ Բաբայանը, ջութակահարներ Սերգեյ Խաչատրյանը եւ Անուշ Նիկողոսյանը:

Նոյեմբերի 21-ին Բոստոնի սիմֆոնիկ հոլում կայանալիք համերգը բարեգործական է, որի տոմսերից գոյացած հասույթը, որպես մարդասիրական օգնություն, կուղղվի Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի աջակցությանը:

Համերգի աջակիցներն են Pan Armenian Council of New England-ը, AGBU New England District-ը, Armenian Relief Society-ն, Friends of Armenian Cultural Society-ն, YerazArt հիմնադրամը եւ Tekeyan Cultural Association-ը: Հունաստանում կայանալիք համերգներն իրականացվում են Հունաստանում ՀՀ դեսպանության աջակցությամբ:

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը հիմնադրվել է 1925 թվականին: Գրեթե 100-ամյա նվագախումբն ունի հարուստ երաժշտական ավանդույթներ ու պատմություն: Հանդես է եկել բազում անվանի դիրիժորների ու մենակատարների հետ աշխարհի տարբեր հեղինակավոր համերգասրահներում: 2000 թվականից նվագախմբի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորն է Էդուարդ Թոփչյանը, որի օրոք նվագախումբը գրանցել է բարձր կատարողական մակարդակ եւ ամենուրեք արժանացել հանդիսատեսի ու երաժշտաքննադատների բարձր գնահատականին:

● Նոյեմբերի 10-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Կապույտ մորուքի յոթ կանայք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԱԿՏԵՐ

ՀԱՐՑ. Վարչական ակտերը ո՞ր դեպքում եւ ի՞նչ ժամկետներում են ներկայացվում հարկադիր կատարման:

Մանուկ Արսենյան (26 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածին համապատասխան վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում, իսկ վարչական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու դեպքում՝ հետաձգելու կամ տարաժամկետելու ժամկետի ավարտից հետո՝ եռամսյա ժամկետում:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝վարչական ակտը, որպես ընդհանուր կանոն, դառնում է անբողոքարկելի այն ուժի մեջ մտնելուց հետո՝2 ամսվա ընթացքում, վարչական բողոք չներկայացնելու դեպքում:

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ակտը դառնում է անբողոքարկելի այն ուժի մեջ մտնելուց հետո՝2 ամսվա ընթացքում, վարչական բողոք չներկայացնելու դեպքում:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ՎԻԶԱ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ձեռք բերել ՀՀ մուտքի վիզա:

Արսեն Սեւոյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Սիրիայի՝ ազգությամբ հայ քաղաքացիները կարող են ձեռք բերել ՀՀ մուտքի վիզա առանց հրավերի: ՀՀ պետական սահմանի անցման կետերում վիզաները տրվում են ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության ստորաբաժանման կողմից:

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սիրիահայերն ազատվում են վիզաների համար վճարումներից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Լոնդոնի ոստիկանությունը մեղադրանք է առաջադրել Just Stop Oil բնապահպանական շարժման մասնակիցներին, որոնք նոյեմբերի 6-ին Լոնդոնի Ազգային պատկերասրահում վնասել են իսպանացի նկարիչ Դիեգո Վելասկեսի (1599-1660) «Հայելիով Վեներան» նկարի պաշտպանիչ ապակին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-2 + 2 +12 + 16
Կոտայքի լեռներ	-2 + 1 +11 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 4 + 6 +16 + 18
Գեղարքունիք	-2 + 2 + 9 + 13
Լոռի	-2 + 3 +12 + 15
Տավուշ	+ 2 + 7 +13 + 17
Արագածոտնի լեռներ	-2 + 1 + 9 + 11
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 + 14 + 18

Արարատ	+ 3 + 7 +18 + 20
Արմավիր	+ 2 + 5 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-1 + 1 +9 + 13
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 7 +17 + 20
Սյունիքի հովիտներ	+ 6 + 10 +17 + 21
Սյունիքի նախալեռներ	0 + 5 +11 + 15
ԼՂՀ	+ 6 + 10 +16 + 20
Երեւան	+ 9 + 10 +20 + 22

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **8.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*